

## ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆ

### ՎԵՐԱԾՆՈՒՆԴ - RENAISSANCE

Հազարամեայ Միջնադարու (Middle Ages) վերջաւորութեան եւ Նոր Դարաշրջանի (Modern Era) սկզբնաւորութեան գտնուող անցման այս շրջանը կը կոչուի՝ **Վերածնունդ** (Renaissance), երբ Միջնադարու մշակոյթը որոշ չափով կը յաղթահարուէր, տեղի կ'ունենար Հնադարեան մշակոյթի վերածնունդ մը եւ կը պատրաստուէր Նոր Դարաշրջանը:

Հնադարեան մշակոյթի վերածնունդը կը յատկանշուի Պլատոնի (Plato, յուն.՝ Plátôn, 427 – 347 մ.թ.ա.) եւ Պլոտինոսի (Plotinus, յուն.՝ Plôtinós, 204 – 270 թ.) վերստին այժմեականացումով: Անոնց երկերը յունարէնէն լատիներէնի կը թարգմանուին եւ կը տարածուին ամբողջ Եւրոպայի մէջ: Իսկ Իտալիոյ Ֆլորենց (Florence) քաղաքին մէջ, 1459 թուականին, վերստին կը հիմնուի պլատոնական «Ակադեմիա»ն, որ սակայն երկար կեանք պիտի չունենար: Իտալիոյ մէջ սկսած վերածնունդի այս հսկայ աշխատանքը կը գլխաւորէին՝ իտալացի անուանի փիլիսոփաներ՝ **Ս. Ֆիչինո** եւ **Ճ. Միրանդոլա**, որոնք, ինչպէս պիտի տեսնենք, կը դառնային նաեւ *Մարդկայնութիւն* ուղիի ռահիվիրաները:

Եւրոպայի մէջ, Վերածնունդի անցման այս շրջանը կը յատկանշուի նաեւ՝ փիլիսոփայական *Մարդկայնութեամբ* (Humanism) եւ կրօնական *Բարեկարգութեամբ* (Reformation):

15-րդ եւ 16-րդ դարերու ընթացքին, եթէ փիլիսոփայական դրութիւններու ու բարոյագիտական տեսութիւններու մեծ նորութիւններ չյայտնուեցան, սա-կայն տեղի ունեցան հիմնական փոփոխութիւններ ու նորութիւններ՝ գիտա-կան, ընկերային, պետական-քաղաքական եւ հոգեւոր մարզերէն ներս:

#### ➤ ԳԻՏՈՒԹԻՒՆ

*Վերածնունդի* անցման այս շրջանը կը յատկանշուի գիտութեան հսկայական յառաջդիմութեամբ, գիւտարարութեամբ եւ նոր յայտնաբերումներով: Մասնաւորաբար յիշատակութեան արժանի են.-

- **Ք. Կոլումբոսի** (իտալ.՝ Christopher Columbus, 1451 – 1506 թ.) կողմէ Ամերիկայի վերայայտնաբերումը (1492 թ.), որ տեղի ունեցաւ, ծովագնացութեան ու նաւագիտական յառաջդիմութեան պատճառով: Այս ոլորտի մէջ նշանաւոր է նաեւ **Վասկո դա Գամա** (պորտ.՝ Vasco da Gama, 1469 – 1524 թ.), որ առաջին յայտնաբերողը եղաւ՝ Հնդկաստանի հարաւ-Ափրիկեան ծովային նոր ուղիին: